Մրցույթ՝ Երևանի <<Էդ.Բոյաջյանի անվան հ.121 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի Հայոց եկեղեցու պատմություն (6 դասաժամ),տեխնոլոգիա (10դասաժամ), համաշխարհային պատմություն (8 դասաժամ), քիմիա (12 դասաժամ),առարկաների ուսուցչի և դասվարի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ), անձը հաստատող փաստաթուղթ, <<Հանրակրթության մասին>>ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում), ինքնակենսագրություն (Ձև 5), այլ պետությունների քաղաքացիները ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ, ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ, հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում), որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 27-ին ժամը 14 ^{00}–ին Երևանի Էդ.Բոյաջյանի անվան հ.121 հիմնական դպրոցում, փաստաթղթերն ընդունվում են 06.09.2023թ-ից 19.09.2023թ. հասցեն՝ Պ.Տիչինայի 2-րդ նրբանցք 121: Տեղեկությունների համար զանգահարել (010)74-15-81 հեռախոսահամարով: